

Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ Ն Ե Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ
 ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

NN ք/կ	<p align="center">Հիմնավորումներ</p>
<p align="center">Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն</p>	
1.	<p align="center">Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի անցկացման ապահովում</p> <p>1. Միջոցառման անհրաժեշտությունը (նպատակը) Բնակչության առողջության ամրապնդում, ակտիվ հանգստի կազմակերպում, բնակչության շրջանում մարզական ընտանիքների թվի ավելացում, առողջ ապրելակերպի արմատավորում:</p> <p>1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները Համաձայն ՀՀ Նախագահի 2004 թվականի մայիսի 20-ի «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում հանրապետության Նախագահի մրցանակներ հիմնելու մասին» ՆԿ-113-Ն կարգադրության՝ 2004 թվականին «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթին մասնակցել է 54 ընտանիք, 2005-ին՝ 82, 2006-ին՝ 84, 2007-ին՝ 107 ընտանիք, 2008-ին՝ 126, 2009-ին՝ 171, 2010-ին՝ 347 ընտանիք, 2011-ին՝ 1122 ընտանիք, 2012-ին՝ 1475 ընտանիք, 2013-ին՝ 2041, 2014 թ. 2067 և 16 հաշմանդամ ունեցող, իսկ 2015-ին՝ 2065 և 19 հաշմանդամ ունեցող ընտանիքներ:</p> <p>Մրցույթի արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ ոչ բոլոր ընտանիքներն են լավագույն ձևով նախապատրաստվում մրցույթին, որոշ ընտանիքներ ամբողջ տարվա ընթացքում մարզումներ չեն անցկացնում, պատշաճ մակարդակով չի կատարվում մրցույթի անցկացման քարոզչությունը համայնքներում:</p> <p>1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Տեղերում անցկացնել խորհրդակցություններ տեղական ինքնակառավարման մարմինների համապատասխան մասնագետների հետ, տրամադրել անհրաժեշտ մեթոդական օգնություն, տրամադրել գովազդային պաստառներ և գովազդային տեսահոլովակներ տեղական հեռուստակայաններով ցուցադրելու համար:</p> <p>2. Կարգավորման առարկան «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի կազմակերպման և անցկացման միջոցով բնակչության ֆիզիկական դաստիարակության, ընդհանուր ֆիզիկական պատրաստության մակարդակի բարձրացման, ֆիզիկական կուլտուրայի շարժման քարոզչության, բնակչության շրջանում առողջ ապրելակերպի արմատավորման իրականացում:</p> <p>3. Ակնկալվող արդյունքը Բնակչության շրջանում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի քարոզում, բնակչության ֆիզիկական դաստիարակության, ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու համար նպաստավոր պայմանների ստեղծում, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի միջոցով ընտանեկան կապերի ամրապնդում և առողջ կենսակերպի գաղափարների արմատավորում, սոցիալական հավասարության խթանում, հաշմանդամների շրջանում բարոյահոգեբանական մթնոլորտի բարելավում, հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցության խթանում, մասնակից ընտանիքների թվի աճ՝ հասցնելով մինչև 2100-ի:</p>

2.

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 4-ի N 587-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ

1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)

Նախագիծը մարզական կոչումների և մարզական կարգերի շտրիման չափորոշիչները միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու, ինչպես նաև մարզական կոչումների և մարզական կարգերի շտրիման չափորոշիչներն ու կարգերն ամբողջական դարձնելու նպատակ է հետապնդում:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 4-ի «Հայաստանի Հանրապետության մարզական կոչումների և մարզական կարգերի շտրիման չափորոշիչներն ու կարգը հաստատելու մասին» N 587-Ն որոշմամբ սահմանված են Հայաստանի Հանրապետության մարզական կոչումների և մարզական կարգերի շտրիման չափորոշիչները, որոնք նոր օլիմպիական պարբերաշրջանի հետ կապված միջազգային չափանիշներին համապատասխանեցման կարիք ունեն և, բացի դրանից, ընդգրկված են ոչ բոլոր մարզական կոչումները, մարզական կարգերը, դրանց շտրիման չափանիշներն ու կարգերը:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Մարզական կոչումների և մարզական կարգերի շտրիման չափորոշիչները համապատասխանեցնել միջազգային չափանիշներին: Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 4-ի «Հայաստանի Հանրապետության մարզական կոչումների և մարզական կարգերի շտրիման չափորոշիչներն ու կարգը հաստատելու մասին» N 587-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելով՝ ամբողջական դարձնել մարզական կոչումների և մարզական կարգերի շտրիման չափորոշիչներն ու կարգերը՝ ապահովելով համապատասխանեցումը միջազգային չափանիշներին:

2. Կարգավորման առարկան

Մարզական կոչումների և մարզական կարգերի շտրիման չափորոշիչների համապատասխանեցում միջազգային չափանիշներին, մարզական կոչումների և մարզական կարգերի շտրիման ամբողջական չափորոշիչների ու կարգերի սահմանում:

3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը

Միջազգային չափանիշներին համապատասխանեցված մարզական կոչումների և մարզական կարգերի շտրիման չափորոշիչներ, մարզական կոչումների և մարզական կարգերի շտրիման ամբողջական չափորոշիչներն ու կարգերը:

3.

«Հայաստանի Հանրապետության մանկապատանեկան մարզադպրոցները, մարզաձևերի ազգային ֆեդերացիաները և այլ մարզական հասարակական կազմակերպություններ գույքով ապահովելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ

1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)

ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումը նպատակ ունի ապահովելու Հայաստանի Հանրապետության մանկապատանեկան մարզադպրոցների, մարզաձևերի ազգային ֆեդերացիաների և այլ մարզական հասարակական կազմակերպությունների մարզակառույցները մարզագույքով: Քանի որ հանրապետությունում մարզագույքի պահանջարկն անցնում է 1 մլրդ դրամից, իսկ ՀՀ պետական բյուջեից վերջին տարիներին մարզագույքի ձեռքբերման համար հատկացվել է տարեկան 50 մլն դրամ (2013 թվականին՝ 100 մլն դրամ), իսկ 2008 և 2014 թվականներին գույքային ծրագիր չի իրականացվել, 2015 թվականի համար ՀՀ պետական բյուջեից մարզագույքի ձեռքբերման համար հատկացվել է 170 մլն դրամ: ՀՀ կառավարության 2015 թվականի մայիսի 27-ի N 559-Ս որոշմամբ 37 անվանում մարզագույք հատկացվելու է 41 մարզական կազմակերպություններին: Քանի որ տրված մարզագույքը միառժամանակ անց մաշվում է, ուստի այս գործընթացը կրում է շարունակական բնույթ:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Մարզական հերթափոխի և բարձրակարգ մարզիկների պատրաստման համար մարզակառույցները ժամանակակից մարզական գույքով ապահովելու, նրանց նյութատեխնիկական պայմանները բարելավելու նպատակով հանրապետությունում գործող 172 մանկապատանեկան մարզադպրոցների և այլ մարզական կազմակերպությունների ուսումնամարզական գործընթացը կազմակերպելու համար 2003 թվականից սկսած (միայն 2008 և 2014 թվականներին գույքային ծրագիր չի իրականացվել) յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին իրականացվում է մարզագույքի բաշխման ծրագիր:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Քանի որ մարզակառույցներում բացակայում է անհրաժեշտ մարզագույքը, իսկ այնտեղ, որտեղ այն կա, հիմնականում հնատն ու հնամաշ է, ուստի նախագծով նախատեսվում է ապահովել մանկապատանեկան մարզադպրոցները և այլ մարզական հասարակական կազմակերպություններ անհրաժեշտ և նորագույն մարզագույքով:

2. Կարգավորման առարկան

ՀՀ կառավարության որոշման կարգավորման առարկան Հայաստանի Հանրապետության մանկապատանեկան մարզադպրոցների, մարզաձևերի ազգային ֆեդերացիաների և այլ մարզական հասարակական կազմակերպությունների՝ գույքով ապահովվածության մակարդակի բարձրացումն է:

3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը

ՀՀ կառավարության որոշմամբ կսահմանվեն ՀՀ մանկապատանեկան մարզադպրոցները, մարզաձևերի ազգային ֆեդերացիաները և այլ մարզական հասարակական կազմակերպություններ գույքով ապահովելու կարգը և քանակները: Ակնկալվում է, որ ամեն տարի լիարժեք կրավարարվի որոշակի թվով մարզադպրոցների մարզագույքի պահանջարկն ամբողջությամբ, ինչի արդյունքում պարզորոշ կերևա մարզագույքի պահանջարկի նվազումը:

4.

«Հրաձգություն մարզաձևի զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի վերաբերյալ

1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)

ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի ընդունման նպատակը հրաձգություն մարզաձևին բնակչության տիրապետման հնարավորության ապահովումն է:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Ներկայումս Երևանում կա ընդամենը երկու գործող հրաձգարան, որոնցից մեկը ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության «Երևանի հրաձգության մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ-ում և մյուսը՝ Բանակի, ավիացիայի և նավատորմի աջակցման կամավոր ընկերությունում (ДООСААФ՝ Добровольное общество содействия армии, авиации и флоту), որտեղ անցկացվում են ՀՀ կրթության և գիտության նախարարության «Հրաձգության հանրապետական մարզադպրոցի մարզումները:

Գյումրիում գործում է մեկ հրաձգարան, որը պատկանում է անհատի և տրամադրվում է վարձակալման սկզբունքով, Վանաձորում գործող հրաձգարաններ ընդհանրապես չկան: Նախկինում գործող բոլոր հրաձգարանները չօգտագործվելու պատճառով կամ փլատակների են վերածվել, կամ վաճառվել են:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Նոր հրաձգարանների կառուցում Երևանում և հանրապետության բոլոր մարզերում՝ ոչ շուտ, քան սկսած 2017 թվականից, ինչպես նաև հրաձգային մարզասարքերի օգտագործումն ազգնազիտության դասերին:

2. Կարգավորման առարկան

Հրաձգություն մարզաձևի զարգացումը ամբողջ հանրապետությունում, Երևան քաղաքում և հանրապետության բոլոր մարզերում բացօթյա հրաձգարաններ (10 մ և 50 մ) կառուցելու միջոցով: Հանրակրթական դպրոցներում և միջին մասնագիտական ուսումնարաններում ռազմագիտության դասի դասավանդման որակի բարձրացում՝ հրաձգային վարժասարքեր ձեռք բերելու միջոցով:

3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը

Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում հրաձգարաններ կառուցելը հնարավորություն կընձեռի ամբողջ բնակչությանը տիրապետելու զենքով ինքնապաշտպանությանը, ավելի հուսալի կդարձնի իրավիճակը սահմանամերձ մարզերում, ինչը ռազմավարական նշանակություն ունի Հայաստանի Հանրապետության համար: Ռազմագիտության դասերի համար հրաձգային վարժասարքերի ձեռքբերումը կնպաստի աճող սերնդին կրակել և նշանառություն ուսուցանելուն, ինչն առաջին անհրաժեշտություն է տղաների և աղջիկների համար:

5. Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար «Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ» մրցույթի անցկացման ապահովում

1. Միջոցառման անհրաժեշտությունը (սպասակը)

Հաշմանդամություն ունեցող անձանց առողջության ամրապնդում, առողջ ապրելակերպի արմատավորում իրենց կենցաղում, ֆիզիկական որակների զարգացում, հաշմանդամային սպորտի մասսայականացում, նրանց ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու պայմանների և սոցիալական վիճակի բարելավում:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Հաշմանդամություն ունեցող անձանց ֆիզիկական դաստիարակության և սպորտով զբաղվելու հարցերով հիմնականում զբաղվում են հասարակական կազմակերպությունները: «Հաշմանդամային սպորտին առնչվող ծառայություններ» ծրագրով իրականացվում է պետական աջակցություն հաշմանդամային սպորտով զբաղվող չորս հասարակական կազմակերպություններին (հենաշարժական համակարգի, տեսողության, լսողության հետ կապված մտավոր խնդիրներ ունեցող): ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից տրամադրվող գումարներն օգտագործում են հանրապետությունում մարզական միջոցառումների անցկացման, ինչպես նաև իրենց միջազգային մրցաշարերին (պարաօլիմպիկ խաղեր, սուրդօլիմպիկ խաղեր, աշխարհի, Եվրոպայի առաջնություններ, վարկանիշային մրցաշարեր) մասնակցելու համար:

Հաշմանդամություն ունեցող անձանց ֆիզիկական ակտիվությունը հասարակության մյուս անդամների համեմատ ցածր է, այդ իսկ պատճառով նրանց համար չափազանց կարևոր է պահպանել ֆիզիկական ակտիվության հնարավորինս բարձր մակարդակը ոչ միայն առողջության ընդհանուր պահպանման և հիվանդությունների կանխարգելման, այլև հաշմանդամության հիմնական պատճառով պայմանավորված երկրորդական բարդությունների զարգացման վտանգը նվազեցնելու համար: Սակայն մարզակառույցների և մարզադպրոցների մեծ մասը մատչելի չեն հաշմանդամություն ունեցող անձանց համար: Հաշմանդամային սպորտի զարգացումը խոչընդոտող խնդիրների լուծումը կարող է տալ դրական արդյունքներ:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Առկա խնդիրների լուծման համար անհրաժեշտ է ավելացնել հաշմանդամային սպորտին ուղղված միջոցառումների քանակը և հաշմանդամային սպորտով զբաղվող հասարակական կազմակերպությունների ֆինանսական աջակցության չափը, մարզերում ակտիվացնել հաշմանդամային սպորտի հիմնահարցերով զբաղվող պետական ու հասարակական կազմակերպությունների աշխատանքները:

2. Կարգավորման առարկան

«Հայաստանի Հանրապետության Նախագահի 2004 թվականի մայիսի 20-ի ՆԿ-113-Ն կարգադրության մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության Նախագահի 2015 թ. հունիսի 4-ի N ՆԿ-83-Ն կարգադրության ընդունմամբ հիմնվեց ևս երկու նոր մրցանակ, մասնավորապես, «Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ» մրցույթը: «Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ» մրցույթին մասնակցում են Հայաստանի Հանրապետության 10 մարզերի և Երևան քաղաքի լողական, տետոլական, հենաշարժողական խնդիրներ և մտավոր սահմանափակումներ ունեցող հաշմանդամություն ունեցող անձինք: Մրցույթի անցկացումն ուղղված է հաշմանդամություն ունեցող անձանց համար հասարակական կյանքի մարզական ոլորտում հավասար իրավունքների և հնարավորությունների ապահովմանը, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի միջոցով հաշմանդամություն ունեցող անձանց լիարժեք կյանք վերադարձին:

3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը

Ծրագիրը կնպաստի հաշմանդամների տարբեր խմբերի անձանց հասարակությանն ինտեգրման գործընթացի խթանմանը, հաշմանդամային սպորտի զարգացմանը, առողջ կենսակերպի գաղափարի արմատավորմանը, հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի լուծմանն ուղղված պետական և ոչ պետական մարմինների միջև գործընկերության արդյունավետ ապահովմանը, միջազգային մրցասպարեզներում, պարաօլիմպիկ, սուբօլիմպիկ ու հատուկ օլիմպիադաների խաղերում, աշխարհի և Եվրոպայի առաջնություններում հայ մարզիկների կողմից բարձր նվաճումների հասնելուն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ